դերի, քանի՛ հազարաւոր օջախների կրակը յանգել է, որովհետեւ տղամարդիկը մեռել են պանդխտութեան մէջ...

Մենք, որ բոլորել ենք այս սեղանի շուրջը, դուրս ենք եկել նոյնպիսի ընտանիքներից. մեր մեծ մասը հայր, մայր, տուն, ազգականներ չունի, — բոլորը՛ կորած են անյայտութեան մէջ: Ուրեմն, մեզ աւելի հասկանալի է, թէ ի՞նչ է կրում այս երկրում մշակ մարդը, որովհետեւ մենք երեխայութիւնից փորձել ենք այն ամէն դառնութիւնները, որովհետեւ մեր ամէն մէկի սրտում դեռ մնացել են անբժշկելի այն վէրքերը, որ ստացել ենք բռնութեան կոպիտ ձեռքից:

Ընտանիքը չկարողացաւ մեզ, իւր որդիներին, այնպէս դաստիարակել, այնպիսի մի ուղղութիւն տալ, որ ձգէինք մեր վզից աղայի լուծը, եւ ազատ մնայինք նրա հարստահարութիւններից: Նա չկարողացաւ մեզ սովորեցնել կեանքի եւ ապրուստի հաստատ պայմանները, որ մեզ համար աշխատէինք, մեզ համար գործէինք, եւ մեր վաստակը օտարը չխլէր մեր ձեռքից: Ընտանիքը չկարողացաւ այդ անել, որովհետեւ ինքը ստրկացած էր, եւ աւելի ցաւալին այն է, որ ստրկութիւնը դարձել էր նրա մէջ բնաւորութիւն: Նա չէ՛ր բողոքում բռնութեան դէմ: Նա մտածում էր՝ թէ աստուած հէնց այսպէս ստեղծել էր նրան, թէ նա գոհ պէտք է լինի իր վիճակից, որովհետեւ ճակատագրից մի տառ անգամ փոխել կարող չէ...

Դպրոցը, որի աշակերտներն ենք այստեղ կանգնածներս, աւելի հաստատեց մեր մէջ ստրկութիւնը. դպրոցը սպանեց մեր մէջ ինքնագործունէութեան ուժերը: Քահանայ վարժապետը մտցրուց մեր մէջ կոյր հնազանդութիւն, — խոնարհոել եւ հպատակել ամէն իշխանութիւնների, որքան ծանր եւ անտանելի լինէր նրանց մեզ վրայ դրած լուծը: Որովհետեւ ինքը վարժապետը նոյնպէս էր վարւում մեզ հետ: Նա ասում էր մեզ՝ թէ այս աշխարհի կեանքն ունայն եւ անցաւոր է. որքան ցաւալի լինի նա, որքան ճոխ լինի նա տանջանքներով, այնքան աւելի վարձատրութիւն կգտնէ մարդ միւս կեանքում, որ սպասում է մեզ գերեզմանը մտնելուց յետո...

Բայց գտնոեցայ մի ձեռք, որ խլեց եւ դուրս բերեց մեզ դպրոցի բարոյապէս եւ մտաւորապէս փտեցնող մթնոլորտից: Նա կանգնեցրուց մեզ ուղիղ ճանապարհի վրայ: Նա սովորեցրուց մեզ կեանքի այն պայմանները, որոնցմով կարող է մարդ հանգիստ եւ ապահով ապրել: Նա սովորեցրուց մեզ օգնել եւ մեզ նման անբախտներին, որ նրանց կեանքն էլ հանգիստ լինէր, որ նրանց ապրուստն էլ ապահոված լինէր: — Եւ մենք նոիրեցինք մեզ ժողովրդի բարօրութեան գործին...